# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի
Ծովասար համայնք, 1-ին փ. 45. Հեռ. (0262) 6-35-47
Էլ. փոստ. tsovasar.gegharquniq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 05 » դեկտեմբերի 2017 թվականի N 24 – Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԾՈՎԱՍԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 16 - րդ հոդվածի 3-րդ և 34-րդ հոդվածի 1-ին, մասի 18 – րդ կետի և «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի, 5-րդ հոդվածի – 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերի, 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ կետերի, 8-րդ հոդվածի, 9-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 3-րդ, 9-րդ կետերի, 10-րդ հոդվածի, 11-րդ հոդվածի և 14 - րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանին որոշում է:

1. Սահմանել տեղական տուրքերի դրույքաչափերը՝

1.1. Համայնքի տարածքում նոր կառուցվող օբյեկտների, շենքերի, շինությունների (ներառյալ ժամանակավոր) շինություն (շինարարական մոնտաժային աշխատանքներ) սկսելու թույլտվության համար՝

ա) Հիմնական օբյեկտների համար՝ 5000 դրամ:

բ) Ոչ հիմնական շենքերի և շինությունների համար մինչև 20մ$^2$ սահմանել 3000 դրամ:

1.2. Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները վերակառուցելու, ամրացնելու, արդիականացնելու, վերականգնելու, օբյեկտների արտաքին տեսքը փոփոխող այլ աշխատանքներ կատարելու թույլտվության համար 3000 դրամ:

1.3. Համայնքի տարածքում գտնվող օբյեկտները քանդելու աշխատանքներ սկսելու թույլատվության հաար 1000 դրամ:

1.4. Համայնքի տարածքում ոգելից խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) Մինչև 26-ից մ$^2$ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում 3000 դրամ:

բ) 101-ից 200մ$^2$ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում 6000 դրամ:

1.5 Համայնքի տարածքում ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա) Մինչև 26-ից մ$^2$ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում 3000 դրամ:

բ) 101-ից 200մ$^2$ մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում 6000 դրամ:

1.6 Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար յուրյաքանչյուր տարվա համար 1000 դրամ:

**2. Սահմանել տեղական վճարների դրույքաչափերը՝**

2.1. Համայնքի տարածքում շինարարության, կամ շինությանարտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար գյուղապետարանի մատուցած ծառայությունների 1000 դրամ:

2.2. Գյուղապետարանի տնօրինության տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքում, անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համար՝ գյուղապետարանի մատուցած ծառայությունների դիմաց, որպես փոխհատուցման վճար, յուրյաքանչյուր միավոր հողատարածքի համար 2000 դրամ:

2.3. Գյուղապետարանի կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման դիմաց մասնակիցներից վճար 2000 դրամ:

2.4. Համայնքի տարացքում աղբահանման վճար սահմանել 136700 դրամ:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրը:

| Կողմ ( 7 ) | Դեմ ( 0 ) | Ձեռնպահ ( 0 ) |
|---|---|---|
| Արտավազդ Նազարյան | | |
| Զարզանդ Հարությունյան | | |
| Լյուդվիկ Մկրտչյան | | |
| Կարեն Մարտիրոսյան | | |
| Հրայր Հարությունյան | | |
| Նաիրի Վարդանյան | | |
| Վարդան Հակոբյան | | |

12/13/2017

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏԱՇԵՍ ՄԽԻԹԱՐՅԱՆ